

ԳՐԱԴԱՐԱՆ

Անցեալ տարւոյն ընթացից մէջ տարրաբանական արտաքոյ կարգի նշանաւոր գիտերէն մին՝ Մուսսոն Գաղղիացւոյն զծորինն 'ի ծորինալրածնական թթուութե (acide fluorhydrique) չեղորացրնելն եղաւ:


Մինչև այն ատեն կ'ենթադրէին թէ ծորինալրածնական թթուութե քլորի դասուն վերաբերի, և 'ի ջրածնէ և 'ի ծորնէ բաղկանայ. Մուսսոն այս կարծիքս ստուգեց, և մինչև այն ատեն որ չէին կրցած զայն իւր տարրեց վերա-

ծել՝ մարտկոցով մը որ Պունսէնի 20 բարդերէն կը բաղկանար, վայրկեանի մը մէջ զայն 'ի ծորին և 'ի ջրածին բաժնեց. և ծորնոյ յատկութիւնքն և ինչ տեսակ մարմին ըլլալն կարգաւ իմացաւ:

Մուսսոնի փորձոյն մէջ ծորինալրածնական թթուութե ջրածնին հոսանքը՝ սկսաւ կանոնաւոր ընթացիւր 'ի նուազական բեւեռն դիմել. և յառաւելական բեւեռն ծորինն հաւաքեցաւ՝ որ հետեւեալ յատկութիւնքն ունէր.

Անդիւր զայն ամբողջապէս կը ծծէր՝ պայծառ

Պարուակ քմաց



Ձև 24. Գաղաթնահայաց հասուն բերնի և կոկորդի

գեղնագոյն ծորնուկ սնդրկի (fluorure de mercure) կազմելով:

Ի ցրտութեան զլուր կը տարրաբաշխէր՝ ողոն (ozone) արձակելով:

Այս կաղին ներկայութեամբ լուսածինն կը բորբոքէր՝ ծորնուկ լուսածնի (fluorure de phosphore) կազմելով:

Թծումն կը հրակիզէր և իսկոյն կը հալէր: Սծումն կարծես ամենեւին փոփոխութիւն մի չէր կրեր:

Հալած քլորուկ կալիոնին (chlorure de po-

tassium) 'ի ցրտութեան կը յարէր՝ քլոր արձակելով:

Հուակ ուրեմն՝ բիրեղացեալ զալլախաղածինն (silicium), որ լուացուած ըլլալ բորակաւ կան և քլորալրածնական թթուութեան, այս կաղին ներկայութեամբ կը բորբոքէր և պայծառ լուսով կը վառէր՝ ծորնուկ զալլախաղածնի (fluorure de silicium) կազմելով:

Այս ամէն յատկութիւններէս իմացուեցաւ թէ ծորինն պարզ մարմին մի է:

